ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №15

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի խորհրդի նիստի 28 մարտի 2014թ.

Նախագահ՝ Ա. Վ. Ցուցուլյան

Քարտուղար՝ Հ. Մ. Գասպարյան

Նիստին հրավիրվել էր նաև ֆակուլտետի համակարգչային մասնագիտական լաբորատորիայի վարիչ Ն. Ն. Դավթյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. *Ավարտական կուրսերի քննաշրջանի նախապատրաստում, գրաֆիկի հաստատում:*

*Զեկուցող՝ ֆակուլտետի դեկան Ա. Ցուցուլյան*

2. *Տեղեկատվական ռեսուրսների չափանիշների արդյունավետության – մատչելիության վիճակի քննարկում:*

*Զեկուցող՝ Ն. Ն. Դավթյան*

**Լսեցին.-** Ա. Վ. Ցուցուլյանի զեկուցումը 2013-14թթ. ուստարվա ավարտական կուրսերի ըստ ուսումնական պլանի կազմված քննաշրջանի ժամանակացույցի և դրա հետ կապված իրականացվող աշխատանքների մասին: Քննաշրջանի գրաֆիկը կազմվել է միայն «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտության համար:

Նա միաժամանակ ընդհանուր հանձնարարական տվեց դեկանատին և ամբիոններին քննաշրջանի ընթացքում լինել հետևողական քննաշրջանը կազմակերպված անցկացնելու՝ համապատասխան ուսումնական կարգին և հաստատված գրաֆիկի:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-** Անտառագիտության ամբիոնի վարիչ Ա. Զ. Ալավերդյանը: Նա ընդգծեց, որ հարցաշարերը ժամանակին տրվել են ուսանողներին, որը կազմվել է ըստ անցած նյութի քննարկվել և կազմվել են քննական տոմսերը: Կազմակերպվում են ակնարկային դասախոսություններ:

**ՈՐՈՇՈՒՄ-** 1. Հաստատել 2013-14թթ. ուս. տարվա II կիսամյակի ավարտական կուրսերի քննաշրջանի ժամանակացույցը:

2. Քննաշրջանը կազմակերպել հաստատված գրաֆիկով:

Օրակարգի երկրորդ հարցի մասին զեկուցող Ա. Վ. Ցուցուլյանը ներկայացրեց ֆակուլտետում իրականացվող տեղեկատվական ռեսուրսների չափանիշների արդյունավետության-մատչելիության մասին: Նա ձայնը տվեց ֆակուլտետի համակարգչային մասնագիտական լաբորատորիայի վարիչ Ն. Ն. Դավթյանին:

Ն. Ն. Դավթյանը ներկայացրեց համակարգչային մասնագիտական լաբորատորիայի գործունեության ոլորտները. դասացուցակով նախատեսված դասապրոցեսից բացի լաբորատորիայում ցուցաբերվում է խորհրդատվական աջակցություն ուսանողներին՝ հետազոտական աշխատանքների կատարման ընթացքում կազմակերպվում և անցկացվում են ավարտական որակավորման և կուրսային աշխատանքների, ռեֆերատների, ինքնուրույն աշխատանքների համակարգչային սպասարկումը, ապահովվում է դասախոսների և ուսանողների անհատական գրաֆիկով աշխատանքը: Առկա է անհրաժեշտ ծրագրային և տեխնիկական ապահովումը: Լաբորատորիայում գտնվում է ներքին ցանց և անվճար ինտերնետ: Ամփոփելով խոսքը զեկուցողը եզրակացրեց, որ համակարգչային մասնագիտական լաբորատորիաների աշխատանքների արդյունավետությունն ու մատչելիությունը ապահովված է:

Ֆակուլտետի խորհրդի նախագահը ավելացրեց, որ ֆակուլտետում գործում է նաև թ. 2 համակարգչային լաբորատորիան, հագեցած ժամանակակից համակարգիչներով:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-**Գ. Վ. Գուլակյանը, Հ. Ս. Գասպարյանը, նրանք համակարծիք էին ներկայացված նյութին, ավելացնելով մասնագիտական համակարգչային լաբորատորիայի կարևորությունը և անհրաժեշտությունը ֆակուլտետի ուսումնական պրոցեսի կազմակերպման գործում:

ՆԱԽԱԳԱՀ Ա. Վ. ՑՈՒՑՈՒԼՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ